Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ԿԱՅԱՐԱՆԸ ՔՐԱՅԻՐ

ՓՈԽԱԴՐ. ԱՌ. ԽԼԿՈՅԱՆ
ԸՍՏ ՉՈՒԿՈՎՍԿՈՒ

891.718
Ղ -88

30 MAY 2011

91-Դu
-88

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԷ՛Ք.

ՓՈԽ. ԱԹ. ԽՆԿՈՅԱՆ
ԸՍՏ ԶՈՒԿՕՎՍԿՈՒ

ԼՎԱՑԱՐԱՆԸ ՋՐԱՑԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ — № 169
ԵՐԵՎԱՆ—1924

17 JUL 2013

652853

Տիրաժ 3,000

Պետտրատի առաջին տպարան Վաղարշապատում

1.

Սավանս տակից,
Վերմակս վրայից
Թև առան թռան
Իմ մահճակալից։

Յեվ գորտի պես
Իրար գալով՝
Բարձս էլ թռավ,
Թռիչք տալով։



2.

Հասա մոմին.
Մոմակալը
Փախավ մտավ
Վառարանը։

Հասա գրքին
Գրքակալի.
Փախավ տակը
Մահճակալի։





3.

Թեյ ուզեցի

Ինքնայեռից,

Հաստափորն էլ

Պռուկ իմ ձեռից։

4.

Ի՜նչ պատահեց,
Զգիտեմ ինչ,
Իմ չորս կողմը
Ամեն ինչ
Խաբավեցին,
Պաբավեցին,
Գլորվեցին
Մեկը մեկի
Յետևից։
Հենց սկսեմ
Յես գրքից,
Վարդիկից,





Հարթուկից,
Կոշիկներից,
Գուլբաներից,
Հաստափորիկ
Ինքնայեռից,
Թեյամանից,
Աղամանից,
Գդալներից,
Դանակներից,
Իմ ջութակից,
Մոմակալից,
Հին ավելից։
Պար բռնեցին
Կլոր, կլոր,
Գլորվեցին
Գլոր, գլոր...
Յես ել մտա
Աթոռի տակ
Ու ճնցի
Խեղճ ու մորոր։

5.

Մին էլ մորս ննջարանից
Վոտները ծուռ՝ ինգին, ինգին,
Լվացարանը դուրս թռավ,

Վրաս թնդաց. «Մտիկ դեմքին,
Աղտոտ, կեղտոտ խոզի գոճի,
Այ անլվա չարաճճի.
Վրադ նայիր մի, ամաչի,



Ես իմ ջուրն հո փողով չի՞։
Լվացվելիս ո՞ւր ես դու, ո՞ւր,
Այ գիժ մոզի, այ թուք ու մուր,
Կատուն թեկուզ սովից մեռնի,
Քո ձեռքիցը հաց չի առնի.
Ականջներդ, ո՞ւֆ, բա քիթդ,
Մինչև անգամ նոր վարդիկդ
Ավելն հեծել՝ ձիավորվել
Ու քեզանից փախս ե տվել։
Առավոտը լույսն ե բացվում,
Լվացվում են, միշտ լվացվում

Մուկ ու մկնիկ,
Կատու, կատվիկ,
Սագ ու սագիկ,
Բադ ու բադիկ,
Սարդ ու սարդիկ,
Բզեզ-բզզան,
Մեղու տզզան.
Դու յես ճնում

Միշտ անլվա,
Վա՜, վա՜, վա՜,
Ամոթ չի՞ բա,
Քեզնից փախան
Կոշիկ-գուլբա.
Աղտոտ տղա,
Կեղտոտ տղա,
Ժրոտ տղա, հա՛, հա՛, հա՛։

Նշանավոր ջրացիրն եմ՝
Լվացարանը մեծափառ.
Լվացարանների մեծը,
Ճլոքների քաջ զորավար—



Յեթե վոտս տամ հատակին,
Ձեն տամ—կանչեմ զինվորներիս՝
Լվացարաններս խմբովին
Ներս կթափվեն ես բոպեյիս.
Յեվ կկանչեն, և՛ կվոռնան,
Յեվ կգոռան, կթռթռան,
Կեղտոտ տղա, քեզ ցույց կտան,
Քեզ կքաշեն մեջտեղ՝ մեյդան,
Գլխիդ վրա քեզ կախ կտան։

Գիտե՞ս վորտեղ,
Գիտե՞ս վորտեղ—
Զանգվի միջին,

Զանգվի միջին,
Մի խորունկ տեղ,
Մի խորունկ տեղ։

6.

Խփեց նա թասին պղնձի
Ու բղավեց. «Հեծեք ձի»։



7.

Մին եվ քանի խոզանակ
Ներս թափվեցին, ներս սենյակ,
Ճռճռացին, ճռճռան
Յեվ ինձ իսկույն ձեռք առան.
Սկսեցին տրորել,

Ականջներս վոլորել,
Հետն եվ յերգել ու ասել.
«Ես ինչ որի յե հասել.
Ծխնելույզ ե սա մրոտ,
Կպրի կարաս ու կպրոտ.
Մենք լվանանք մրոտին,
Մենք լվանանք կպրոտին.
Իստակ, իստակ, իստակենք,
Խոզի մազով ծակծկենք»։

8.

Յեվ սապոնն եվ թև առավ,
Մազերիս մեջ հոփ թռավ.
Փրփուր, փրփուր վեր ածեց
Ու բոռ դարձավ ինձ կծեց։

9.

Բայց կատաղի ճլոբից
Յես դուրս փախա սենյակից
Ձու փողոցը Աբովյան,

Ենտեղից էլ Նազարյան,
Ենտեղից էլ դեպի Կոնդ,
Ինչպես դասից փախած մոնդ։



10.

Բայց չպրծա ճլոբից.
Նա ընկած իմ յետևից՝
Հալածում է, հալածում
Ու գայլի պես ինձ կծում։

Յեռ դեպ այգին պատկոմի.
Մեկս մեկից զիլ քամի.
Յերկուսով մեզ թոփ արինք,
Այգու պատից հոպ արինք։

11.

Ծառուղիով մեր դիմաց
Կուկուշ, Գուգուշ հետն առած՝
Կոկորդիլոսը ռեխը բաց
Մեն եր գալիս. ու հանկարծ

Ծնոտները շուռ տվեց,
Են ճլոբին կուլ տվեց։

12.

Իսկ ինձ վրա բղավեց.
—Ա՛յ դու, դու, Գիժ մոզի, Տուն վազի,
Ասում ե, Ասում ե, Ասում ե,
Գիժ կատու, Անվարտիկ, Լվացվիր,
Ասում ե, Ասում ե, Ասում ե,

65287

Դեհ ցանվիր,
Ասում է,
Թե չէ, այ լոբի,
Ասում է,
Կերթաս մոտը ճլոբի։

13.

Լեղապատառ թողի փախա դեպի տուն.
Լվացարանի մոտ իսկույն
Սապոնն առա
Ու ձեռքերս լվացի,
Աղտը,
Կեղտը,
Կոշիկները
Ու թանաքի
Բիծը—
Միծը
Ձեռքերիցս,
Յերեսիցս հանեցի։

14.

Մին էլ տեսնեմ՝
Ավելն հեծած վարտիկս
Ձիու թամբից
Թռավ ընկավ իմ գիրկս։

15.

Տաք-տաք գաթան

Ինձ ասաց.

— Ա՛յ ընկեր,

Բերանդ բաց

Ու ինձ կեր։

16.

Մի մեծ պատառ

Մեղր ու կարագ

Քսած հաց

Հենց իր զոռով

Բերանիցս կուլ գնաց։

17.

Գիրք ու տետրակ,

Գրիչ, թանաք

Յեկան իջան սեղանին,

—Ինչ մաքրուր ես,

Ինչ խտակ ես,

Ինձ ասում եր հայելին։

18.

Եղտեղ հայտնի Զրացիրը՝

Լվացարանը մեծափառ,

Լվացարանների մեծը՝

Ճլոբների զորավար,

Առաջ յեկավ պարելով,

Ինձ համբուրեց՝ ասելով.

—Ա՛յ հիմա սիրում եմ քեզ,
Ա՛յ հիմա գովում եմ քեզ.
Ա՛յ հիմա պուպուշիկ ես,
Ա՛յ հիմա թութուշիկ ես,
Բադի խոտակ բուլիկ ես,
Ինչ անուշիկ բալիկ ես։





19.

Հացից առաջ,
Հացից հետո,
Թե իրիկուն,
Թե առավոտ
Միշտ լվացվի,
Միշտ լվացվի.
Անվային
Աղտոտ, կեղտոտ—
Հազար ամոթ,
Հազար ամոթ։

Մուր-մրոտին,
Ճրպ—ճպռոտին,
Կեղտոտ քթին,
Փսնքոտին—
Հազար ամոթ,
Հազար ամոթ։

20.

Կեցցե՛ս, կեցցե՛ս
Հոտով սապո՛ն,
Կեցցե՛ս փափուկ
Յերեսսրբիչ,
Դու ատամի
Փոշի մանր
Յեվ դու գլխի
Սիրուն սանր.
Յեկե՛ք ծափ տանք,
Լոգանք, լող տանք

Խորը տաշտում,
Մեծ տակառում,
Վազան ջրում,
Գետում, ծովում,
Տաք բաղնիսում.
Ձեզ եմ ասում,
Միշտ էլ գովենք
Ջուրը, ջուրը,
Ջուրն է մաքրում
Կեղտն ու մուրը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0398358

4639

Հ. Ս. Խ. Հ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Մանկական սերիա

1. Հովհ. Թումանյան — «Գիքորը», պատկերազարդ. Հ. Կոջոյան (32 էջ) 1924 թ. Յերևան Գինը — ր. 40 կ.
2. Ի. Տուրգենև — «Մումու» թարգմ. Աս. Զորյան (27 էջ), 1924 թ. Յերևան . . . » — ր. 20 կ.
3. Ա. Կարինյան — Հերոսը (Զրույց ջայլամի մասին) (23 էջ) 1924 թ. Յերևան . . » — ր. 20 կ.
4. Նիկ. Սարգսյան — Արհեստավորները (պատմվածք կենդանիների կյանքից) (83 էջ), 1924 թ. Յերևան . . . . . . » — ր. 60 կ.
5. Կարանֆիլ. Գնացքը փրկող աղջիկը (պատմվածք) թարգմ. Կարեն Միքայելյանի (15 էջ), 1924 թ. Մոսկվա . . . . » — ր. 25 կ.
6. Լվացարանը չրաշխ (Мойдодыр) ըստ Չուկովսկու, փոխ. Ա.Թ. Խնկոյան (պատկերազարդ). (26 էջ), 1924 թ. Յերևան . . . » — ր. 25 կ.
7. Կարեն Միքայելյան — Անմահական կայծ, պատմվածք (փոխադր.) պատկերազարդ (22 էջ) Մոսկվա . . . . . . » — ր. 30 կ.

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

Լույս տեսած գրքերը վաճառվում են Պետհրատի գրախանութ…

Տիրաժ 3000

Պետհրատի առաջին տպարան Ալեքսանդրապոլում.